



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԱԳԱՐԱԿԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի

Ագարակաձոր համայնք, հասցե, Վայոց ձորի մարզ գյուղ Ագարակաձոր, հեռախոս՝ 0281 2 20 80

**ԱԳԱՐԱԿԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2017-2021ԹԹ ԾՐԱԳԻՐ**

Հաստատվել է համայնքի ավագանու 09.12.2016թ. թիվ 46-Ն որոշմամբ

Ագարակաձոր համայնքի ղեկավար՝



Դ. Մարտիրոսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի գնահատում.....	4
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը նկարագրող ցուցանիշներ.....	6
2.3 Ազարակաձոր համայնքի զարգացման 2017-2021թթ. ծրագրի հիմնական գերակայությունները.....	7
2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ.....	8
2.5 Համայնքում սոցիալ-տնտեսական զարգացմանը խոչընդոտող գործոնները.....	8
2.6 Ազարակաձոր համայնքի զարգացման ուժեղ և թույլ կողմերը.....	9
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	11
3.1 Ազարակաձոր համայնքի տեսլական.....	11
3.2 Առաջնահերթ նախատեսվող ծրագրերի կոնկրետ նկարագիրը, նպատակները և խնդիրները՝ ըստ առանձին բնագավառների.....	12
4. ՀԶՄ ֆինանսավորում.....	17
5. ՀԶՄ մոնիթորինգ.....	19

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Համայնքի զարգացման ծրագիրն այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է առաջիկա հինգ տարիների ընթացքում ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

Համայնքի ներդաշնակ զարգացման, բնակչության սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովման, սոցիալ մշակութային քաղաքականության ներդրման և բարեկեցության մակարդակի բարձրացման նպատակով առաջիկա հինգ տարիներին ծրագիրը հանդիսանալու է ամենօրյա աշխատանքային փաստաթուղթ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Վայոց Ձոր մարզի Ազարակաձոր գյուղը գտնվում է մարզի հարավ-արևմտյան հատվածում, Արփա գետի ձախ ափին՝ Եղեգնաձոր-Գնիշիկ տանող ճանապարհի 2 կողմերում, զբաղեցնում է 576.7 կմ² տարածք, սահմանակից է Եղեգնաձոր, Մալիշկա, Գնիշիկ համայնքներին:

Գյուղն ունի 310 առկա տնտեսություն՝ 1535 բնակչությամբ, սեռային կազմում արական՝ 863, իգական՝ 672:

Գյուղում գործում է մեկ միջն. դպրոց, մանկապարտեզ, բուժ. կետ, մշակույթի տուն, գրադարան, կապի հանգույց:

Համայնքում առկա է 1863 մետր միջին ճնշման, 6622մ ցածր ճնշման գազատար:

2500մ բարձր լարման, 9200մ ցածր լարման էլ. գծեր, 7300մ ինքնահոս ջրատար:

Համայնքում զարգացած է գյուղատնտեսությունը՝ հիմնականում անասնաբուծությունը: Անասնագլխաքանակը կազմում է. խոշոր եղջուրավորը՝ 407 գլուխ, մանր եղջուրավոր՝ 17 գլուխ, խոզեր՝ 24 գլուխ, թռչուն՝ 1600 թև, մեվաղնտանիք՝ 553:

Գյուղի ռեյիեֆն ունի հնագույն հրաբխային կառուցվածք և կտրտված է փոքրիկ գետակով՝ Գռավ կոչվող, և ձորակներով:

Կլիման մերձարևադարձային է: Տեղումների քանակը տատանվում է 350-450մմ: Առավելագույնս դիտվում է գարնանը՝ ապրիլ- մայիս ամիսներին:

Ժողովրդագրություն. Գյուղում ապրում են 1535 բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 56,22 % - ը: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. երեխաներ (0-6տ)	101
2. դպրոցական (7-17տ)	119
3. 18-62 տարեկան	971
4. թոշակառուներ	115
5. հաշմանդամներ	104
6. աշխատունակներ	

947

Զբաղվածություն. Համայնքի վարչական տարածքի բնակչության ընդհանուր թվաքանակից զբաղվածներ՝ 870 մարդ, այդ թվում՝ գյուղատնտեսական աշխատանքներով՝ 360 մարդ, այլ բնույթի ոչ գյուղատնտեսական աշխատանքներով՝ 200 մարդ, շուրջ 310 մարդ մեկնում է արտագնա աշխատանքի:

Աշխատատեղերի պակասը և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները խթանում են բնակչության արտագնա աշխատանքի մեկնելուն:

Համայնքի տարածքում գործում են 4 պարենային և ոչ պարենային խանութներ, գրանցված են արտադրական և ոչ արտադրական մասնավոր ձեռնարկություններ, անհատ ձեռներեցներ: Այդպիսի խոշոր սննդի արդյունաբերության ձեռնարկություններից է «Գրանդ Քենդի» ընկերությունն, որի պահեստը գտնվում է համայնքի վարչական տարածքում, որը համայնքի բնակիչների համար ապահովում է մինչև 3 աշխատատեղ:

Վերջին տարիների ընթացքում համայնքի արդյունաբերությունը անկում է ապրել, ընդլայնվել է առևտրային գործունեությունը:

Բնակիչների եկամուտների հիմնական աղբյուրը թոշակներն ու նպաստներն են, ինչպես նաև արտերկրից եկած դրամական միջոցներն, որի համակարգից շատ ընտանիքներ դուրս են մնացել:

Այս հիմնախնդիրների հաղթահարման հիմնական ճանապարհը աշխատատեղերի ստեղծումն է, քանզի համայնքն ունի մեծ աշխատուժ, մտավոր և ֆիզիկական զգալի պոտենցիալ, որն էլ հույս է ներշնչում՝ լավատեսորեն նայելու վաղվա օրվան:

Տեղական ինքնակառավարման մարմինները. Ժողովրդի իշխանություն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար և համայնքի ավագանի, չորս տարի ժամկետով:

Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ:

Համայնքի ղեկավարը (գյուղապետը) պաշտոնապես ներկայացնում է համայնքը, համայնքի գործադիր մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ:

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է գյուղապետարանի աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Գյուղապետը ստեղծել է **աշխատակազմ** հետևյալ կառուցվածքով՝

- Տեղակալ՝ 1 դրույք
- Աշխատակազմի քարտուղար՝ 1 դրույք
- Հաշվապահ, գլխավոր մասնագետ՝ 1 դրույք
- Առաջատար մասնագետ՝ 1 դրույք
- Հավաքարար՝ 1 դրույք
- Մշակույթի տան տնօրեն՝ 1 դրույք
- Հավաքարար՝ 0.5 դրույք
- Գրադարանավար՝ 0.5 դրույք

Համայնքի ենթակառուցվածք է՝

Մանկապարտեզ

- Մանկապարտեզի վարիչ՝ 1 դրույք
- Հաշվապահ՝ 1 դրույք
- Դաստիարակ՝ 1 դրույք
- Դաստիարակ՝ 1 դրույք
- Դայակ՝ 1 դրույք
- Դայակ՝ 1 դրույք

- Երաժիշտ՝ 0.5 դրույք
- Խոհարար՝ 1 դրույք
- Օժանդակ բանվոր՝ 1 դրույք
- Դռնապան՝ 1 դրույք

Համայնքի ավագանին կազմված է 7 մարդուց:

Համայնքն ունի սեփականություն, որի իրավունքը պաշտպանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով: Համայնքի սեփականություն կարող են լինել անշարժ և շարժական գույքը, դրամական միջոցները և գույքային այլ իրավունքներ:

Գյուղապետարանը գտնվում է համայնքի կենտրոնում, շենքային պայմանները բավարար են, գույքը նորացված է, համալրված է համակարգչային տեխնիկայով: Համայնքում առկա է համախմբվածություն, որը սակայն չի հանգեցրել սոցիալական ինստիտուտների ձևավորման: Համայնքում չկան ֆորմալ միավորումներ:

2.2 Համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակը նկարագրող ցուցանիշներ

Երկրի տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունները սոցիալական ու տնտեսական զարգացման մակարդակների շեղումներն են, որոնք, որպես արդյունք, խոչընդոտում են տնտեսական աճն ու կայուն մարդկային զարգացումը ինչպես Ազարակաձոր համայնքում, այնպես էլ ամբողջ երկրում:

Ազարակաձորի համայնքն ունի մեկ մշակույթի տուն, որն ունի վերանորոգման կարիք, մեկ գրադարան, մեկ մանկապարտեզ՝ վերանորոգված է մեկ խմբի համար, խիստ անհրաժեշտություն կա վերանորոգելու շենքի կտուրն ամբողջությամբ և ունի մեկ վերանորոգված բուժ.կետ:

Գյուղն ունի 370 ծուխ, որոնցից 32-ը ընդգրկված են ընտանեկան նպաստի համակարգում, սոցիալական նպաստի համակարգում ընդգրկված են 12-ը, աղքատության նպաստի համակարգում 1-ը:

Համայնքում կա 251 առանձնատուն, 4 հազ.քմ. տարածքով: Կան վթարային շենքեր:

Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը ստացվում է բուսաբուծությունից և անասնապահությունից: Հիմնական սպառման շուկաներ, որպես այդպիսին, համարվում է քաղաք Եղեգնաձորի շուկան: Համայնքի համար որպես այլնտրանքային շուկաներ են հանդիսանում Գեղարքունիքի և Սյունիքի մարզերը:

Ազարակաձորի համայնքում առկա են հետաքրքրություն ներկայացնող մի շարք բնական, պատմական և մշակութային կոթողներ:

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 2016թ-ին կազմել է 37798,5 հազար դրամ:

Ընդհանուր եկամուտներն մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 8270 հազար դրամ կամ համայնքի ընդհանուր տարեկան բյուջեի 21.77%:

2.3 Ագարակաձորի համայնքի զարգացման 2017-2021 թվականների ծրագրի հիմնական գերակայություններն են՝

- Ագարակաձորի տարածքային համաչափ, կայուն զարգացումը և պլանավորումը
- բնակչության կենսական շահերի ապահովումը
- ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթներից բխող՝ Ագարակաձոր համայնքի բնակչության պաշտպանության և անվտանգության, հասարակական կարգի և համակեցության կանոնների պահպանության ապահովումը
- կառավարման համակարգի բարեփոխումները և տեղական ինքնակառավարման արդյունավետության ապահովումը՝ այդ նպատակով իրավական դաշտի կատարելագործումը, նորագույն տեխնոլոգիաների ներդրումը, հաղորդակցության ժամանակակից միջոցների կիրառումը և բնակչի հետ հետադարձ կապի ակտիվացումը՝ ապահովելով վերջինիս փարժեք մասնակցությունը համայնքային խնդիրների լուծման գործընթացում
- գյուղական տնտեսության բոլոր ոլորտների՝ ժամանակի պահանջներին համահունչ զարգացման ապահովումը
- 3-րդ և 4-րդ կարգի վթարայնության աստիճան ունեցող շենքերի գույքագրում և դասակարգում ըստ առաջնահերթության
- Ագարակաձորի համայնքապետարանի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների պարզեցումը և որակի էական բարելավումը
- բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովումը՝ ինչպես համայնքի բնակիչների, այնպես էլ հյուրերի համար՝ այդ նպատակով հանգստի գոտիների ստեղծումը, կանաչ տարածքների պահպանումն ու ավելացումը, շենքերի և բակային տարածքների բարեկարգումը, ժամանակակից չափանիշներին համապատասխան արտաքին ձևավորումը, հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովումը
- էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործումը
- համայնքի բնակիչների սոցիալական պաշտպանության ապահովումը՝ այդ նպատակով սոցիալական ծրագրերի իրագործումը նաև մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ
- կրթական համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովումը
- համամարդկային և ազգային արժեքների, ազգային ավանդույթների, հոգևոր մշակութային ժառանգության պահպանման և դրանց վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը և պատշաճ ներկայացումը
- առողջապահության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը
- գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը

- միջազգային համագործակցության ընդլայնումը, քույր և գործընկեր համայնքների և քաղաքների հետ արդյունավետ համագործակցության ակտիվացումը, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունն ու կիրառումը:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ

Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, գույքահարկից, տեղական տուրքերից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտների սեփական եկամուտները փոքր մաս են կազմում, սակայն դրանք 2013-2016թթ. փաստացի տվյալներով աճել են:

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 2016թ-ին կազմել է 37798,5 հազար դրամ: Ընդհանուր եկամուտներն մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 8270 հազար դրամ կամ համայնքի ընդհանուր տարեկան բյուջեի 21.77%:

Առաջիկա 5 տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը, ի հաշիվ տեղական տուրքերի և վճարների: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

2.5 Համայնքում սոցիալ – փնտեսական զարգացմանը խոչընդոտող գործոններն են՝

1. Գործարար միջավայրի բացակայությունը և ձեռնարկատիրությանը չխթանելը
2. Համայնքի բնակչության սոցիալական թույլ պաշտպանությունը
3. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ մարզասրահների բացակայություն
4. Երիտասարդության պասիվությունը ակտիվ մշակույթային և մարզական կյանքի նկատմամբ
5. Ճանապարհային ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը
6. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքական պաշտպանության միջոցառումների իրականացման բացակայություն
7. Համայնքում աշխատատեղերի բացակայություն
8. Ֆինանսական միջոցների սուղ բացակայությունը
9. Ցածր արտադրողականությունը, ժամանակակից տեխնիկայի և ենթակառուցվածքների բացակայություն

10. Խորհրդատվական ծառայությունների ցածր մակարդակ և տեղեկատվության պակաս
11. Գործարար կառավարման հմտությունների և փորձի բացակայություն
12. Համայնքում աղքատության բարձր մակարդակ
13. Համայնքում առկա ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործում

2.6 Ազարակաձոր համայնքի զարգացման ուժեղ և թույլ կողմերը

Ազարակաձոր համայնքի ուժեղ կողմերն են.

- սկսնակ գործարարների համար խոչընդոտները քիչ են
- գյուղում զազաֆիկացման բարձր մակարդակ
- ազատական շուկայական համակարգ
- հեռահաղորդակցման և համացանցի առկայության պայմաններ
- հողային պաշարները կարելի է զարգացնել և արդյունավետ օգտագործել
- մենաշնորհների ցածր մակարդակ
- գյուղատնտեսության համար բարենպաստ հարկային միջավայր
- արտահանման ծավալների մեծացման լավ ներուժ
- հանքային ջրերի առկայություն
- գյուղատնտեսական տուրիզմ
- քարանձավային տուրիզմ
- պեոլիտների առկայություն
- ածուխի որոշ տեսակների առկայություն
- անսահմանապակ ֆեռոգիտի առկայություն
- խմելու ջրի անսահմանապակ պաշար
- համայնքում աշխատուժի առկայություն

Ազարակաձոր համայնքի թույլ կողմերն են.

- ենթակառուցվածքների և ինստիտուցիոնալ կառույցների թերզարգացվածություն
- ցածր արտադրողականություն և հնացած տեխնոլոգիաներ
- գործարար կառավարման հմտությունների և փորձի բացակայություն
- շուկաների մատչելիության, գործարար ծառայությունների, տեղեկատվության պակաս
- խորհրդատվական ծառայությունների ցածր մակարդակ
- տեղական ինքնակառավարման մարմինները ֆինանսապես մոտիվացված չեն զարգացնելու իրենց համայնքներում առկա բիզնեսը, քանի որ ըստ նրանց այն չի նպաստում բյուջետային մուտքերի ավելացմանը
- ժամանակակից տեխնիկայի և ենթակառուցվածքների բացակայություն
- հողային պաշարների ոչ արդյունավետ օգտագործում
- վարկերի բարձր տոկոսադրույքները
- գյուղատնտեսության խոցելիություն՝ կապված գլոբալ կլիմայական փոփոխությունների հետ
- ոռոգման համակարգի և գյուղական ենթակառուցվածքների

բարելավում՝ ճանապարհների և սոցիալական կառույցների բարեկարգման միջոցով, գյուղական զարգացմանն ու եկամուտների ավելացմանը նպաստելու նպատակով

- համայնքի կարողությունների հզորացում՝ բիզնեսի զարգացմանն օժանդակելու նպատակով
- կողմնորոշում դեպի արտահանման շուկաներ, արտահանման շուկաների և ապրանքների բազմազանեցում
- ներդրումային և գործարար միջավայրի բարելավում՝ ներդրողներին գրավելու նպատակով:

Հնարավորություններ

- համայնք այցելող զբոսաշրջիկների աճի տեմպեր
- ՏԻՄ ոլորտում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շարունակական բնույթ և աճ
- համագործակցության շրջանակների ընդլայնում

Սպասնալիքներ

- համայնքում բնակչության միգրացիայի աճ
- սոցիալ-տնտեսական ընդհանուր իրավիճակի վատթարացում

Աջակցել համայնքում իրականացվելիք ներդրումային ծրագրերին

- համայնքի համար գերակա ճյուղ ճանաչել զբոսաշրջությունը, ստեղծել բարենպաստ պայմաններ զբոսաշրջության զարգացման համար
- ներտնտեսային հյուրանոցների հիմնում և զարգացում
- համայնքում գործող խոշոր կազմակերպություններին ներգրավել հյուրանոցային բիզնեսի ոլորտ
- նպաստավոր պայմաններ ստեղծել ՓՄՁ զարգացման համար
- պտղատու այգիների և չրերի արտադրության հիմնում
- հանքային ջրերի արդյունավետ օգտագործում
- հետևողական լինել համայնքի սանիտարական վիճակին, բարելավել աղբահանության հետ կապված ծառայությունները, ավելի մաքուր և զբոսաշրջության համար գրավիչ համայնք ունենալու համար
- համագործակցել դոնոր կազմակերպությունների հետ համայնքում ջերմոցային տնտեսություններ, սառնարանային տնտեսություններ, անասնապահական և թռչնաբուծական ֆերմաներ ստեղծելու համար, համապատասխան տնտեսավարողների հետ համատեղ կանոնակարգել դաշտը
- կաթի և պանրի արտադրության հիմնում
- աջակցություն ցուցաբերել տնտեսավարողներին՝ համայնքում վերականգնելու հին ավանդույթները՝ կարպետագործությունը, ջուլիակագործությունը, կավագործությունը և այլն, ինչը կնպաստի համայնքում տուրիզմի զարգացմանը
- աշխատանքներ տանել համայնքում նորագույն տեխնոլոգիաների ներդրմանն ուղղությամբ, մասնավորապես այլընտրանքային էլեկտրոէներգիա ստանալու համար՝ արևային էներգիայի օգտագործում, հիդրոէլեկտրոկայանների շահագործում

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 Ազարակաձոր համայնքի տեսլականն է՝

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ և մաքուր, օժանդակել գյուղատնտեսական արտադրության ավելացմանը, բնակչության համար բավարար կենսապայմանների և կենսամակարդակի բարձրացմանը և զբոսաշրջության համար գրավիչ պայմաններ ստեղծմանը հատկապես՝ էկո և քարանձավային տուրիզմի խթանմանը:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

1. Համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աճ և իրացում:

2. Համայնքում կաթի, մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում և գործարկում:

3. Համայնքում մեղվապահության զարգացում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրություն:

4. Համայնքում բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրաէներգիայի մատակարարում, աղբահանության և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաաշտպանություն, աղքատության կրճատում և այլն) շրճանակի աստիճանական ընդլայնման և որոշակի անշեղ բարձրացման միջոցով:

5. Համայնքում հողագործության և այգեգործության զարգացում և համայնքում առկա հողային ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործում:

6. Ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում:

7. Համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում ամբողջ տարվա ընթացքում՝ համայնքային հիմնական ենթակառուցվածքների (համայնքապետարան, մանկապարտեզ, գրադարան, բուժկետ) միջոցով:

8. Երիտասարդ ընտանիքների բնակարանաշինության խթանում:

9. Զբոսաշրջությունը համայնքի համար գերակա ճյուղ ճանաչում: Բարենպաստ պայմանների ստեղծում զբոսաշրջության զարգացման համար:

10. Ներտնտեսային հյուրանոցների հիմնում և զարգացում:

11. Էկո և քարանձավային տուրիզմի զարգացում:

12. Աջակցություն ցուցաբերում տնտեսվարողներին՝ համայնքում վերականգնելու հին ավանդույթները՝ կարպետագործությունը, ջուլհակագործությունը, կավագործությունը և այլն:

13. Պատմամշակութային արժեքների պահպանում և վերականգնում:

3.2 Առաջնահերթ նախատեսվող ծրագրերի կոնկրետ նկարագիրը, նպատակները և խնդիրները ըստ առանձին բնագավառների

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների.

ԾՐԱԳԻՐ 1

Համայնքի մանկապարտեզի շենքի և կտուրի նորոգում

Համայնքում դեռևս չլուծված խնդիր է հանդիսանում մանկապարտեզի հարցը: Մանկապարտեզի համար լուծված է հոսանքի հարցը, համայնքապետարանի կողմից կատարվել են մի շարք ներդրումներ, որի արդյունքում վերանորոգվել է համայնքի մանկապարտեզի շենքը մասնակիորեն: Խիստ անհրաժեշտություն կա վերանորոգել շենքի կտուրը ամբողջությամբ: Չնայած այն հանգամանքին, որ Ագարակաձորի համայնքը երկար տարիներ է արդեն գազաֆիկացված է, մանկապարտեզը մինչ օրս չունի ջեռուցուման համակարգ: Առաջին իսկ հնարավորության դեպքում համայնքապետարանը պատրաստ է հատկացնել ներդրման համար պահանջվող գումարի մի մասը, ինչպես նաև անհրաժեշտ է դիմել ՀՀ կառավարությանը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է համարժեք ֆինանսավորում և հետևողական աշխատանքներ՝ այն ավարտին հասցնելու համար:

ԾՐԱԳԻՐ 2

Մշակույթի տան շենքի և կտուրի նորոգում

Համայնքի համար կարևորագույն խնդիր է իրականացել մշակույթի տան շենքի և կտուրի նորոգումը: Ծրագիրն ընդհանուր առմամբ նպատակ ունի բաժրացնելու մշակույթի դերը, պահպանելու ազգային մշակութային ժառանգությունը և ներուժը, ապահովելու մշակութային ավանդական ձևերի զարգացումը: Ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Ագարակաձորի համայնքում մշակույթի ոլորտի հիմնախնդիրները կապված են հիմնականում գյուղական համայնքում մշակույթի տան և ակումբի նյութատեխնիկական բազայի զարգացման հետ: Ագարակաձոր համայնքի մշակույթի տան շենքի կտուրն առաջնային և խիստ անհրաժեշտություն ունի վերանորոգման: Կտուրի աշխատանքների ավարտից հետո անմիջապես

անհրաժեշտություն կա ամբողջությամբ վերանորոգել մշակույթի տան շենքը: Ծրագիրն իրականացնելու համար համայնքապետարանը պատրաստ է ցուցաբերել համարժեք ֆինանսական ներդրում, ինչպես նաև անհրաժեշտ է հարցը բարձրացնել ՀՀ կառավարության առջև:

ԾՐԱԳԻՐ 3

Համայնքի Արփա գետի վրա գործող կամրջի վերանորոգում

Ազարակաձորի համայնքը և Եղեգնաձոր քաղաքն իրար կապող միակ գործող կամուրջը գտնվում է վթարային և անմխիթար վիճակում: Նշված կամուրջը հանդիսանում է ռազմավարական նշանակության օբյեկտ, որը սպասարկում է նաև սահմանամերձ Գնշիկ համայնքը: Ակնհայտ է, որ կամրջի շարքից դուրս գալու դեպքում ինչպես սահմանամերձ Գնշիկ համայնքն, այնպես էլ Ազարակաձորի համայնքը կտրվում են արտաքին աշխարհից: Ծրագիրն իրականացնելու համար համայնքը պատրաստ է կատարել համարժեք ֆինանսական ներդրում, ինչպես նաև տրամադրել աշխատուժ: Անհրաժեշտ է խնդիրը բարձրացնել ՀՀ կառավարության առջև, հրավիրել համապատասխան մասնագետների, խնդրին հիմնավոր լուծում տալու համար:

ԾՐԱԳԻՐ 4

Ոռոգման ջրագծի կառուցման ծրագիր

Ազարակաձոր համայնքի ստեղծման օրվանից աշխատանքներ են կատարվել ոռոգելի հողատարածությունների ընդարձակման ուղղությամբ, որը հնարավոր է իրականացնել նոր ոռոգման ցանցերի և պոմպակայանների կառուցմամբ, ինքնահոս ջրատարների նորոգմամբ և կառուցմամբ: Համայնքն ունի լավ հնարավորություն բուսաբուծության զարգացման համար: Ոռոգման ջրի բացակայության պատճառով ոռոգելի հողատարածությունների մեծ մասը չի մշակվում: Ազարակաձորի համայնքում նախատեսվել է կառուցել 5կմ երկարությամբ 25մմ խողովակաշարով ոռոգման նախագիծ: Ծրագիրն իրականացնելու համար համայնքը պատրաստ է ցուցաբերել համարժեք ֆինանսական ներդրում, ինչպես նաև անհրաժեշտ է հարցը բարձրացնել համապատասխան գերատեսչությունների և ՀՀ կառավարության առջև:

ԾՐԱԳԻՐ 5

Խմելու ջրի ջրամբարի վերանորոգման ծրագիր

Խմելու ջուրը ռազմավարական ռեսուրս է, որը չի մատակարարվում շատ համայնքներում, չնայած որ մարզի շատ բնակավայրերում գոյություն ունեն ջրի բնական պաշարներ: Այսպիսով՝ ջրամատակարարման ոլորտի խնդիրը կապված է ոչ թե ջրի պակասի, այլ ջրամատակարարման համակարգերի հնամաշության և քայքայվածության, պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայությամբ: Ազարակածորի համայնքը ունի խմելու ջրի մեծ ռեսուրսներ: Ջուրը սարերից խողովակաշարով հասնում է գյուղի տարածք: Ամբողջովին փոխվել է ներքին ցանցը: Նախատեսվում է վերանորոգել խմելու ջրի ջրամբարը 900 տոննա տարողությամբ և համայնքում ջրի վարակազերծման նպատակով գլխամասային կետույցների սանիտարական պահպանման գոտիների վերականգնում ինչը պահանջում է մեծ ծախսեր և ֆինանսավորում: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է դիմել «Կառավարությանը՝ ծրագիրը առաջնահերթ խնդիրների ցանկում ներառելու և համապատասխան դոնոր կազմակերպություններին ներկայացնելու համար:

ԾՐԱԳԻՐ 6

Համայնքի գործող աղբավայրի ցանկապատում և կանոնակարգում

Համայնքի միակ գործող աղբավայրը գտնվում է բաց և անմխիթար վիճակում, որը սպառնում է շրջակա միջավայրին (մթնոլորտային աղտոտվածություն, ջրային, հողային ռեսուրսների և ընդերքի աղտոտում, լանդշաֆտի էսթետիկական տեսքի խաթարում, սանիտարահիգիենիկ վիճակի վատթարացում, սուր վարակիչ հիվանդությունների սրացում, մկնանման կրծողների և թափառող շների պոպուլյացիաների ավելացում և այլն): Պլաստիկ շէերը և պոլիէթիլենային տոպրակները իրական աղետ են ներկայացնում շրջակա միջավայրի, հարակից պտղատու այգիների և ընտանի կենդանիների համար: Անհրաժեշտ է կատարել տարածքի ցանկապատում, հողային աշխատանքներ և պլանավորում: Ցանկալի կլիներ եթե ոչ համայնքի, ապա գոնե մարզի մասշտաբով ստեղծվեր աղբի վերամշակման գործարան: Քանի որ ծրագիրը հնարավոր է իրականացնել մաս-մաս, պահանջվող ֆինանսական միջոցները կհատկացվեն ընթացիկ տարիների համայնքի բյուջեից: Իսկ աղբի վերամշակման գործարան հիմնելու համար անհրաժեշտ է խնդիրը բարձրացնել կառավարության առջև:

ԾՐԱԳԻՐ 7

Հանրապետական նշանակություն ունեցող ճանապարհների ասֆալտապարման ծրագիր

Ֆիզիկական մեկուսացվածությունը ԿԶԾ-ում սահմանված է որպես կարևորագույն գործոն, որը խոչընդոտում է կենսաբանական, սոցիալական ու մշակութային կարիքները հոգալուն: Հայաստանում աղքատության մակարդակը ուղղակիորեն կապակցված է ք.երևանից ու մարզկենտրոններից համայնքների հեռավորության հետ և հատկապես այդ հեռավորությունները կապող ճանապարհների անմխիթար վիճակի հետ: Այս առումով աղքատության աստիճանը ուղղակիորեն կապվում է ճանապարհային ցանցի վիճակի հետ: Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները դասակարգվում են ըստ ենթակայության՝ /<< տրանսպորտի և կապի նախարարության, մարզային և համայնքային/, իսկ մարզային /տեղական/ նշանակության ավտոմոբիլային ճանապարհները՝ /մարզային և համայնքային ենթակայության/: Անհրաժեշտ է Ազարակաձորի համայնքում իրականացնել 5կմ համապետական նշանակության ճանապարհի ասֆալտապատում: Համայնքի գլխավոր մայրուղին գտնվում է անմխիթար և քանդված վիճակում: Այդ ճանապարհը կապող օղակ է Գնշիկի և Ազարակաձորի համայնքները Եղեգնաձոր քաղաքի հետ: Գնշիկի համայնքն ունի ռազմավարական և մարտավարական շատ լուրջ նշանակություն ինչպես մարզի և համայնքի, այնպես էլ ամբողջ հանրապետության համար: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է պետական աջակցություն:

ԾՐԱԳԻՐ 8

Համայնքի գլխավոր փողոցների լուսավորություն

Ազարակաձորի համայնքի համար կարևոր և կենսական նշանակություն ունի փողոցային լուսավորությունը: Ազարակաձոր համայնքի նպատակն է փողոցների լուսավորության ցանցի ստեղծումն ու արդիականացումը: Ծրագրի հիմնական բաղադրիչներն են առաջնային և երկրորդական փողոցներում լուսատուների տեղադրումը, ժամանակակից էներգաարդյունավետ տեխնոլոգիաներով և ավտոմատացված վերահսկման և էներգիայի մոնիտորինգի հնարավորություններով լուսավորության կառավարման կենտրոնական համակարգի տեղադրումը: Համայնքում փողոցների ավելի լավ լուսավորությունը կբարելավի ճանապարհային երթևեկության անվտանգությունը և կնպաստի գյուղում հասարակական վարքի բարելավմանը: Ծրագիրը պահանջում է մեծ ֆինանսական միջոցներ, որը հնարավոր չէ իրականացնել համայնքի բյուջեի հաշվին: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է դիմել << կառավարությանը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ներգրավելու համար:

ԾՐԱԳԻՐ 9
ՓՄՁ աջակցության ծրագիր

Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ոլորտը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը: Համայնքում սոցիալական համերաշխության և տնտեսական աճի ապահովման երաշխավորված միջոցը զարգացած փոքր և միջին ձեռնարկատիրության առկայությունն է: Զբաղվածության ապահովման և, դրանով իսկ, աղքատության հաղթահարման խնդիրներն արմատական լուծումներ կստանան միայն հասարակության միջին խավը ձևավորող փոքր և միջին կազմակերպությունների զարգացման միջոցով:

Հայաստանի Հանրապետության կառավարության համար հրատապ է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտների վերացումը՝ շարունակաբար բացահայտելով և ներդնելով աջակցության առավել արդյունավետ մեխանիզմներ: Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական քաղաքականության տնտեսական նպատակների անկյունաքարն է հանդիսանում ՀՀ մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունների հաղթահարումը՝ օգտագործելով յուրաքանչյուր տարածաշրջանի տնտեսական զարգացման առանձնահատկություններն ու ներուժը և խթանելով տնտեսվարող սուբյեկտների միջև ներմարզային և միջմարզային համագործակցության զարգացումը: Զարգացած երկրներում ՓՄՁ-ը ապահովում են ՀՆԱ 75-80 տոկոսը, մինչդեռ ՀՀ մասնաբաժինը կազմում է մոտավորապես 45 տոկոս: Մարզի զարգացման ծրագրով փոքր և միջին ձեռնարկության աջակցության միջոցառումները նախատեսված է իրականացնել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) գործունեության շրջանակներում: Ծրագրի շահառուների շրջանակները ընդլայնելու գործում կարևոր դեր ունեն կատարելու տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց մասնակցությունը փոքր և միջին ձեռնարկության աջակցման ծրագրերի պլանավորման և իրագործման գործընթացներում նախատեսված է, սակայն դեռևս թույլ է դրսևորվում:

ՓՄՁ զարգացման առկա հնարավորություններն են .

- բնակչության ձեռներեցությունը՝ համայնքում բարձրագույն և մասնագիտական կրթություն ունեցող անձանց սեփական գործ սկսելու ցանկությունը, տեղական գյուղմթերքների հումքային բազայի հիման վրա վերամշակման և իրացման արդյունավետ կազմակերպումը,
- զբոսաշրջության զարգացումը,
- համայնքում ներդրումներ կատարելու տեղացի արտագնա ձեռներեցների պատրաստակամությունը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է դիմել ՀՀ կառավարությանը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ներգրավելու համար :

4. ՀՁԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Ազարակաձոր համայնքի զարգացման ծրագրի իրականացման համար պահանջվում է 550 միլիոն դրամ: Ծրագրով ներկայացված հիմնախնդիրներն ըստ տարիների և ֆինանսավորման աղբյուրների կվերանայվեն և կհստակեցվեն՝ ելնելով տվյալ տարվա համար պետական բյուջեից և համայնքային բյուջեներից, ինչպես նաև ֆինանսական այլ աղբյուրներից համապատասխան ծրագրերի համար նախատեսված ֆինանսական միջոցների առկայությունից:

Առաջնահերթությունը տրվել է այն ոլորտներին և ուղղություններին, որոնց զարգացումը առավել կարևոր է համայնքի սոցիալ-տնտեսական առաջընթացի վրա: Ղրա հետ միասին տրվել են այն ոլորտների և բնագավառների զարգացման միտումները, որոնք հեռանկարներում կարող են դառնալ համայնքի գերակա ուղղություններից մեկը: Հաշվարկները կատարվել են ՀՀ դրամով: Սակայն չեն բացառվում նաև արտարժույթի ներգրավումները: Այդ դեպքում ծրագրում անհրաժեշտ փոփոխություններ և վերահաշվարկներ կկատարվեն:

Արդյունաբերությունը համայնքում զարգանալու է ՓՄՁ կառույցների միջոցով: Խոշոր արտադրությունների կազմակերպում համայնքում չի նախատեսվում: Հիմնականում զարգանալու են առավել գերակա ուղղությունները: ՓՄՁ ոլորտի հատկացումները ծրագրավորվող 5 տարիների ընթացքում կազմելու են շուրջ 125 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 22,73 %-ը):

Սոցիալական ոլորտի ընդհանուր ֆինանսավորման համար կպահանջվի 120 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 21,82 %-ը), այդ թվում՝ Կրթության ոլորտի ընդհանուր ֆինանսավորման համար կպահանջվի 50 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 9,09 %-ը): Մշակույթին, սպորտին և երիտասարդության հարցերին նախատեսված է 15 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 2,73%-ը): Առողջապահության ոլորտի ընդհանուր ֆինանսավորման համար կպահանջվի

15 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր 2,73 %-ը): Սոցիալական պաշտպանության ոլորտի համար կպահանջվի 40 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 7,27 %-ը): Այն նախատեսված է մարզի քաղաքներում թեք հարթակների կառուցման, սոցիալապես ծանր վիճակում գտնվող մարդկանց և ընտանիքների, հաշմանդամների, որբ երեխաների առողջական, սոցիալական և տնտեսական խնդիրների լուծման, հասարակության մեջ նրանց ինտեգրումն ապահովելու նպատակին:

Գյուղատնտեսության ոլորտի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է ձախսել 60 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 10,91 %-ը):

Բնապահպանության ոլորտին հատկացվող միջոցները կազմում են 10 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 1,82%-ը):

Նախատեսվում է գրոսաշրջության ոլորտին հատկացնել 75 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 13,63%-ը): Կբարեկարգվեն պատմական և բնության հուշարձանները, կբացվեն գրոսաշրջային նոր երթուղիներ, հիմք կդրվի ընտանեկան տուրիզմին:

Ենթակառուցվածքների զարգացման նպատակով նախատեսվում է 2016-2021թթ. ծախսել 150 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 27,27 %-ը)՝ այդ թվում. Ճանապարհաշինության բնագավառին նախատեսված է 50 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 9,09%-ը): Վերանորոգվելու են հանրապետական, մարզային և համայնքային նշանակության ճանապարհներ, ապահովվելու է դրանց պահպանությունը և անվտանգությունը: Ջրամատակարարման բնագավառի ծախսերը կազմում են 100 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 18,12%-ը): Նախատեսվում է կառուցել նոր ջրագծեր, հիմնանորոգել եղածները, ջրով ապահովել նոր կառուցվող թաղամասերը և ապահովել խմելու ջրի մաքրությունն ու համակարգում ստեղծել անվտանգ սանիտարական պայմաններ:

Ծրագրավորվում է բարելավել արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պաշտպանվածությունը: Միջոցներ կհատկացվեն պատսպարանների կառուցման, պաշտպանական համակարգի հզորացման նպատակներով: Առավել արդյունավետ կկազմակերպվի պայքարի բնական և տեխնաժին աղետների դեմ: Քաղպաշտպանության բնագավառին 2017-2021թթ. հատկացվելու է 10 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 1,82 %-ը):

Ագարակաձորի համայնքի 2017-2022թթ. ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի ֆինանսավորումն կազմելու է ըստ ոլորտների, ուղղությունների և աղբյուրների 550 միլիոն դրամ, որից՝ պետական բյուջե - 430 մլն. դրամ այդ թվում՝ սեփական միջոցներ - 25 մլն. դրամ, համայնքային բյուջե - 55 մլն. դրամ, մասնավոր ներդրողներ - 30 մլն. դրամ այլ աղբյուրներ - 10 մլն. դրամ:

5. ՀՁԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀՁԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանը, այդ իսկ պատճառով ՀՁԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները,
- ծրագրի օգուտները և արդյունքները,
- ներգրավված բնակիչների թիվը,

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Ազարակաձոր համայնքի մանկապարտեզի շենքի և կտուրի նորոգում» (Ծրագրի անվանում)

Պարտազիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն					
Ծրագրի անմիջական նպատակ	Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
100	100	100	100	100	100	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
100	100	100	100	100	100	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	2. Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ					
	1.1. Մանկապարտեզի շենքի նորոգման նախագծահաշվային փաստաթղթերի կազմում 1.2. Շինարարական աշխատանքների իրականացում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0 Կապիտալ ծախսեր՝ 30 մլն. Ընդհանուր բյուջեն՝ 30 մլն.					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բացառությամբ ֆինանսականի՝ այլ ռեսուրսներ չեն պահանջվում					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերվում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Ազարակաձորի համայնքն ունի					
Ծրագրի հիմնական շահառուները	2-6 տարեկան երեխաները և նրանց ծնողները					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Չնայած ներկայումս Ազարակաձորի համայնքում մանկապարտեզահասակ բոլոր երեխաները հաճախում են մանկապարտեզ, սակայն բնական աճի և Եղեգնաձոր քաղաքին մոտ գտնվելու պայմաններում կա վտանգ, որ երեխաները կսկսեն հաճախել Եղեգնաձոր քաղաքի մանկապարտեզներ: Նման խնդրից խուսափելու, երեխաների առողջ ու անվտանգ ուսուցանվելու իրավունքն իրականացնելու համար անհրաժեշտ է իրականացնել մանկապարտեզի հիմնանորոգում:					

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ա Ն Ա Գ Ի Ր

«Ազարակաձոր համայնքի մշակույթի տան շենքի և կտուրի նորոգում» (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղական համայնքում մշակույթի և մշակույթի տան նյութատեխնիկական բազայի զարգացում					
Ծրագրի անմիջական նպատակ	Բարձրացնել մշակույթի դերը, պահպանել ազգային մշակութային ժառանգությունը և ներուժը, ապահովել մշակութային ավանդական ձևերի զարգացումը					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
100	100	100	100	100	100	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բարձրացնել մշակույթի դերը, պահպանել ազգային մշակութային ժառանգությունը և ներուժը, ապահովել մշակութային ավանդական ձևերի զարգացումը					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
100	100	100	100	100	100	
	2. Համայնքի բնակիչների հոգևոր բավարարվածությունը					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Մշակույթի տան շենքի նորոգման նախագծահաշվային փաստաթղթերի կազմում 1.2. Շինարարական աշխատանքների իրականացում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ֆոկլուս խմբերի շրջանում հարցումներ					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0 Կապիտալ ծախսեր՝ 70 մլն. Ընդհանուր բյուջեն՝ 70 մլն.					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բացառությամբ ֆինանսականի՝ այլ ռեսուրսներ չեն պահանջվում					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերվում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Ազարակաձորի համայնքն ունի					
Ծրագրի հիմնական շահառուները	Ազարակաձոր համայնքի ամբողջ բնակչությունը					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Բարձրացնել մշակույթի դերը, պահպանել ազգային մշակութային ժառանգությունը և ներուժը, ապահովել մշակութային ավանդական ձևերի զարգացումը					

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Համայնքի Արվա գետի վրա գործող կամրջի վերանորոգում» (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միաված ծրագիրը	Համայնքը եղեգնածոր քաղաքին կապող միակ գործող կամրջը գտնվում է անմխիթար և վթարային վիճակում						
Ծրագրի անմիջական նպատակ	Նշված կամրջը հանդիսանում է ուղղակիորեն նշանակության օբյեկտ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ազարակածոր համայնքի բնակչության կյանքի ապահովություն						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100	100	100	100	100	100
	2. Համայնքի բնակչության կապը արտաքին աշխարհի հետ						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
	100	100	100	100	100	100	
Ծրագրի ոլորտական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Կամրջի նորոգման նախագծահաշվային փաստաթղթերի կազմում 1.2. Շինարարական աշխատանքների իրականացում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0 Կապիտալ ծախսեր՝ 35 մլն. Ընդհանուր բյուջեն՝ 35 մլն.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բացառությամբ ֆինանսավանի՝ այլ ռեսուրսներ չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերվում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Ազարակածորի համայնքն ունի						
Ծրագրի հիմնական շահառուները	Ազարակածոր համայնքի ամբողջ բնակչությունը						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017						
Ծրագրի ռամստոտ նկարագրություն	Ազարակածոր համայնքի բնակչության անվտանգության ապահովումը և կապը արտաքին աշխարհի հետ						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Ոռոգման ջրագծի կառուցում» (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ազարակաձոր համայնքում գյուղատնտեսության զարգացում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ազարակաձոր համայնքում գյուղատնտեսության խթանում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100	100	100	100	100	100
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Գյուղատնտեսությամբ զբաղվողների եկմտի տարեկան աճ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		20	10	10	10	10	10
	2. Բերքատվության աճ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
25		10	10	10	10	10	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Ոռոգման ցանցի նախագծահաշվային փաստաթղթերի կազմում</p> <p>1.2. Ոռոգման ցանցի կառուցում և շահագործում</p> <p>1.3. Բնակիչների շրջանում բացատրական աշխատանքի վարում՝ արդյունավետ ոռոգման համար</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Գյուղատնտեսական կուլտուրաների մշակման ագրոտեխնիկական կանոնների ծանոթացում</p> <p>2.2. Հողերի ճիշտ մշակում և ոռոգումն ապահովելու օգտագործում</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 0.5 մլն.</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 89.5 մլն.</p> <p>Շնդհանուր բյուջեն՝ 90 մլն.</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բացառությամբ ֆինանսականի՝ այլ ռեսուրսներ չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերվում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, ուրի հնարավորությունը Ազարակաձորի համայնքն ունի						
Ծրագրի հիմնական շահառուները	Ազարակաձոր համայնքի՝ գյուղատնտեսությամբ զբաղվող տնային տնտեսություններ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ազարակաձոր համայնքը գյուղատնտեսության զարգացման համար ունի լավ կլիմայական պայմաններ և բերրի հողեր: Ոռոգման ցանցի կառուցումը հնարավորություն կտա բնակիչներին զարգացնել գյուղատնտեսությունը և ակնկալել ավելի մեծ բերքատվություն և եկամուտներ:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Ազարակաձոր համայնքում խմելու ջրի ջրամբարի վերանորոգում» (Ծրագրի սև վանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ազարակաձոր համայնքի բնակիչներին ապահովել մշտական ջրով					
Ծրագրի անմիջական նպատակ	Ազարակաձոր համայնքի բնակիչներին ապահովել մշտական ջրով					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	100	100	100	100	100	100
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. 900 տոննա տարողությամբ ջրամբարի վերանորոգում					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	---	---	---	---	---	---
	2. Ազարակաձորի բնակչության բավարարվածությունը խմելու ջրի մատակարարումից					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.
Ծրագրի էիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. 900 տոննա տարողությամբ ջրամբարի վերանորոգման նախագծային աշխատանքներ 1.2. Ջրամբարի կառուցում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ֆոկոս խմբերի շրջանում հարցումներ					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.5 մլն. Կապիտալ ծախսեր՝ 39.5 մլն. Ընդհանուր բյուջեն՝ 40 մլն.					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բացառությամբ ֆինանսականի՝ այլ ռեսուրսներ չեն պահանջվում					
Ծրագրի էիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի էիմնական ռիսկերը վերաբերվում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Ազարակաձորի համայնքն ունի					
Ծրագրի էիմնական շահատուները	Ազարակաձոր համայնքի բնակչությունը					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը հնարավորություն կտա խմելու ջրով ապահովել Ազարակաձոր համայնքը՝ միաժամանակ լուծելով համայնքի բնակավայրերի միջև զարգացման տարբերությունները և ապրելու հավասար կենսապայմանները					

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Համայնքի գործող աղբավայրի ցանկապատում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնայիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ազարակաձոր համայնքի աղբավայրը գտնվում է բաց վիճակում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ազարակաձոր համայնքի շրջակա միջավայրին սպառնացող աղտոտվածության վերացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Համայնքում աղբահանության իրականացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	100	100	100	100	100	100	
	2. Ազարակաձորի բնակչության բավարարվածությունը աղբահանությունից	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
	2016		2017	2018	2019	2020	2021
Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.		
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ազարակաձոր համայնքի աղբավայրի ցանկապատման նախագծային աշխատանքների իրականացում 1.2. Ազարակաձոր համայնքի աղբավայրի կառուցում և ցանկապատում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.5 մլն. Կապիտալ ծախսեր՝ 11.5 մլն. Ընդհանուր բյուջեն՝ 12 մլն.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բացառությամբ ֆինանսականի՝ այլ ռեսուրսներ չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերվում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Ազարակաձորի համայնքն ունի						
Ծրագրի հիմնական շահառուները	Ազարակաձոր համայնքի բնակչությունը						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը հնարավորություն կտա նվազեցնելու Ազարակաձոր համայնքի շրջակա միջավայրին սպառնացող աղտոտվածությունը						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Հանրապետական նշանակություն ունեցող ճանապարհների ասֆալտապատում»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում					
Ծրագրի անմիջական նպատակ	Ծրագիրը նպատակ ունի բարձրացնել համայնքում կենսական, սոցիալական և մշակութային կարիքների բավարարմանը					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգել 3 կմ երկարությամբ հանրապետական նշանակության ճանապարհ					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	2. Բնակիչների բավարարվածությունը հասարակական տրանսպորտի աշխատանքից					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծային աշխատանքներ 1.2. 3 կմ երկարությամբ ճանապարհի կառուցում 2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.5 մլն. Կապիտալ ծախսեր՝ 349.5 մլն. Ընդհանուր բյուջեն՝ 350 մլն.					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ մեխանիզմներ	Բացառությամբ ֆինանսականի՝ այլ մեխանիզմներ չեն պահանջվում					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերվում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Ազարակաձորի համայնքն ունի					
Ծրագրի հիմնական շահառուները	Ազարակաձոր համայնքի բնակչությունը					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2019					
Ծրագրի նամատու սկզբնականություն	Ծրագրով նախատեսվում է վերանորոգել Ազարակաձոր և Գնիշիկ համայնքները Եղեգնաձոր քաղաքին կապող 3 կմ երկարությամբ հանրապետական նշանակության ճանապարհը:					

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Ագարակաձոր համայնքի գլխավոր փողոցների լուսավորություն»
(Ծրագրի անվանում)

Փարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ագարակաձոր համայնքի գլխավոր փողոցների լուսավորություն						
Ծրագրի անմիջական նպատակ	Փողոցների լուսավորության ցանցի ստեղծում և արդիականացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Առաջնային և երկրորդական փողոցներում լուսատուների տեղադրում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.
	2. Լուսավորության կառավարման կենտրոնական համակարգի տեղադրում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	Բավար.	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Առաջնային և երկրորդական փողոցներում լուսատուների տեղադրման նախագծային աշխատանքների իրականացում 1.2. Ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացում 2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.5 մլն. Կապիտալ ծախսեր՝ 14.5 մլն. Շեղհանուր բյուջեն՝ 15 մլն.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բացառությամբ ֆինանսականի՝ այլ ռեսուրսներ չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերվում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Ագարակաձորի համայնքն ունի						
Ծրագրի հիմնական շահառուները	Ագարակաձոր համայնքի բնակչությունը						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017						
Ծրագրի հստատու նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է բարելավել փողոցների լուսավորությունը և ճանապարհային երթևեկությունը, ինչը կնպաստի համայնքի բնակիչների հասարակական կյանքի բարելավմանը						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ա Ն Ա Գ Ի Ր

«ՓՄՁ աջակցության ծրագիր»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Միջին խավի ձևավորում						
Ծրագրի անմիջական նպատակ	Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտների վերացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Սոցիալական համերաշխության և տնտեսական աճի ապահովում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2. Չբաղվածության ապահովում և աղքատության կրճատում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված ծրագրի նախագծում 1.2. ՓՄՁ զարգացման առկա հնարավորությունները 2.1. Ֆոկոս խմբերի շրջանում հարցումներ						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.5 մլն. Կապիտալ ծախսեր՝ 39.5 մլն. Ընդհանուր բյուջեն՝ 40 մլն.						
Ծրագրի իրականացման իսամար անհրաժեշտ այլ ունեցվածքներ	Բացառությամբ ֆինանսականի՝ այլ ունսուրներ չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերվում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Ազարակաձորի համայնքն ունի						
Ծրագրի հիմնական շահառուները	Ազարակաձոր համայնքի բնակչությունը						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում համայնքում զբաղվածության ապահովում, դրանով իսկ աղքատության հաղթահարում, սոցիալական համերաշխություն և տնտեսական աճի ապահովում:						